# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 29 - 30 (16628) ՇԱԲԱԹ, 14 ԱՊՐԻԼԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ՝ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց երկրի կառավարության նախաձեռնությամբ գյուղերում սկսնակ գործարարների աջակցության «Երիտասարդ ձեռնե-րեց» նոր ծրագրի շնորհանդեսին:*



Ելույթ ունենալով միջոցառմանը՝ երկրի վարչապետը նշեց, որ Վրաստա-նում գործարարության զարգացումը երկրի կառավարության առաջնահեր-թություններից մեկն է:

- Գործարարության խրախուսման նպատակով, երկրում գործում են մի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԷՄԻՐԱԹՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ



*Ապրիլի 10-ից Վրաստանի նախագահ Գիոր-գի Մարգվելաշվիլին տիկնոջ՝ Մակա Չիչուայի հետ, պաշտոնական երկօրյա այցով գտնվում էր Արաբական Միացյալ էմիրաթներում:*

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը Աբու-Դաբիում հանդիպում ունեցավ էմիրաթների գահաժառանգ, շեյխ Մուհամմեդ Բեն Զայթ Ալ Նա-խայամի, վարչապետ, շեյխ Մուհամմեդ Իբն Ռաշ-իդ Ալ Մագթունի հետ: Վրաստանի նախագահի եւ Արաբական Միացյալ էմիրաթների գահաժա-ռանգի հանդիպմանն առանձնակի ընդգծվեց արա-բական երկրի կողմից Վրաստանում իրականաց-վող ներդրումների աճի դինամիկան: Կողմերը քն-նարկեցին երկու երկրների միջեւ ազատ առեւտրի մասին պայմանագրի ձեւավորման հեռանկարը:

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

29 տարի առաջ, 1989 թվականի ապրիլի 9-ին, խորհրդային զորքերը դաժանորեն ճնշեցին Թբի-լիսիի կենտրոնում, Ռուսթավելու պողոտայի վրա, երկրի անկախության կոչով անցկացվող հանրա-հավաքը: Այդ օրը զոհվեց 21 մարդ: Երկու տարի անց, 1991 թվականի ապրիլի 9-ին, Վրաստանի Գե-րագույն խորհուրդը, հիմնվելով նույն թվականի մայիսի 31-ին անցկացված համընդհանուր հան-րաքվեի արդյունքների վրա, հռչակեց Վրաստանի պետական անկախության վերականգնումը:

Ապրիլի 9-ին Ռուսթավելու պողոտայում գտն-վող հուշահամալիր այցելեցին եւ ծաղկեպսակ-ներ դրեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգ-վելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվի-լին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախի-ձեն, Վրաստանի օրենսդիր եւ գործադիր մարմ-նի ներկայացուցիչներ:

(Խորագրի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԻՆՁ ՈՒԺ Է ՏԱԼԻՍ ՀԱՎԱՏԸ ԵՐԿՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ»

### ԿԱՅԱՑԱՎ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎՈՎ 7-ՐԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

*Հայաստանն արդեն ունի նոր նախագահ: Մարտի 2-ին Ազգային ժողովում նախագահ ընտրվելուց հետո, Արմեն Սարգսյանը, ապրի-լի 9-ի Հայաստանի Ազգային ժողովի (ԱԺ) հատուկ նիստում, որն անցկացվեց Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգա-յին համալիրում, ձեռքը դնելով «Վեհամոր» Ավետարանի եւ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Սահմանադրության վրա, երդվեց. «Ստանձ-նելով Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. հա-վատարիմ լինել ՀՀ սահմանադրությանը, իմ լիազորություններն իրականացնելիս՝ լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետա-կան ու համազգային շահերով եւ իմ ողջ ուժը ներդնել ազգային մի-ասնության ամրապնդման գործում: Աստված ինձ օգնական»:*



Երդմնակալությունից հետո, հնչեց Հայաստանի Հանրապե-տության օրհներգը:

Հայրապետական օրհնանքի խոսք հղեց Ամենայն Հայոց կա-թողիկոս Գարեգին Երկրորդը:

Ապա ծրագրային խոսքով ելույթ ունեցավ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը:

Երդմնակալությունից հետո, նախագահ Արմեն Սարգսյանը այ-ցելեց «Եռաբլուր» պանթեոն, դա եւս նոր քայլ է Մաշտոցի թիվ 47-ում, Մատենադարանի հարեւա-նությամբ, «Ընդունելության տուն» կոչվող նստավայր ունեցող նա-խագահի համար:

Հավելենք, որ երկրի սահմա-նադրությունում իրականացված փոփոխությունների համաձայն, Հա-յաստանի նոր նախագահի լիազո-րությունները, ի տարբերություն նա-խորդների, հինգի փոխարեն, սահ-մանված են յոթամյա ժամկետով, թեպետ դրանից հետո նա չի կա-րող առաջադրվել այդ պաշտոնում:

Նշենք, որ Հայաստանը ապ-րիլի 9-ից անցել է լիարժեք Խորհրդարանական կառավար-ման համակարգի:

Սահմանադրության համաձայն, Հայաստանի կառավարությունը հրաժարական տվեց, բայց կառա-վարության անդամները շարունա-կում են իրենց պարտականություն-ների կատարումը մինչեւ նոր կա-ռավարության կազմավորումը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԿՐԹՕՋԱԽ

## ՊԱՏՄԱԿԱՆ «ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ» ՇԵՆՔՈՒՄ ԲԱՑՎԵՑ «ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ»



*Ապրիլի 12-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, երկրի օրենսդիր եւ գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ, մասնակցեց Թբիլիսիի «Ներ-սիսյան դպրոցի» նորացված շենքում «Կովկասի համալսարանի» բացման հանդի-սավոր արարողությանը:*

Գիորգի Մարգվելաշվի-լին շրջայց կատարեց դե-ռեւս 1909 թվականին կա-ռուցված եւ մի քանի տա-րի առաջ «Կովկասի հա-մալսարանի» կողմից գն-ված շենքում:

- Ամբողջ սրտով շնոր-հավորում եմ բուհի 20-ամ-յա հոբելյանի եւ նոր շենքում համալսարանի նորամուտի առթիվ: Ես իրոք հիշում եմ ձեր գործունեության առաջին օրերը, երբ մենք գործըն-կերներով խորհում էինք, թե ինչպես զարգացնել կրթու-թյան օջախի կառույցը, որը գործնականում համապա-տասխանում է մեր երկրի առջեւ ծառացած բոլոր հիմ-նախնդիրներին,- հայտարարեց նախագահը եւ հավելեց, որ այդ հիմնախնդիրները կարելի է լուծել միայն կրթու-թյան միջոցով եւ այն բուհերի հիմնմամբ, որոնք ապա-հովում են համապատասխան կրթություն:

Վրաստանի նախագահը շնորհավորեց ուսանող-ներին եւ վրաց հասարակայնությանը կարեւոր ձեռք-բերման համար եւ նշեց, որ ինքը քաջատեղյակ է համալսարանի շնորհալի ուսանողների գործունե-ության մասին:

- Իմ մայրը, որն այստեղ դասավանդում է, հաճախ է ասում ինձ, թե ինչ լավ ուսանողներ կան, եւ ինչպես են նրանք վերաբերում ուսմանը,- ընդգծեց Գիորգի Մարգ-վելաշվիլին:

«Կովկասի համալսարանի» շենքի վերանորոգման համար ծախսվել է 8 մլն դոլար:

Մեր ընթերցողին հիշեցնենք, որ «Ներսիսյան դպրո-ցը» բացվել է 1824թ. Թիֆլիսի Եռագմբեթ եկեղեցու բակի շինություններից մեկում, այդ ժամանակ Վիրահայոց թեմի առաջնորդ, ապա՝ կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու նախաձեռնությամբ:

Սկզբում դպրոցը կոչվել է «Թիֆլիսի հայոց ուսում-նարան», 1838թ. ստացել է հիմնադիրի անունը եւ վե-րանվանվել «Ներսիսյան հոգեւոր ճեմարան»: 1877թ. հանրակրթական հաստատություն դարձած այդ ճեմա-րանում սովորել ցանկացողների թիվն այնքան աճեց, որ ակնհայտ դարձավ ճեմարանի ընդլայնման անհրաժեշ-տությունը, եւ նոր ճեմարանը 1909-1912 թթ. կառուցվեց քաղաքի հյուսիս-արեւմուտքում ընկած, ինչպես թիֆլիսցիներն էին ասում «Արսենալի լեռան» մոտակայքում:

Ի դեպ, պատմական ճակատագրով, այսօր Գ. Աթոնե-լու անունը կրող նախկին Վանքի այդ նույն փողո-ցի թիվ 5 շեն-քում գործում են Թբիլիսիի թիվ 104 հանրային հայկական դպ-րոցը եւ «Վրաս-տան» թերթի խմ-բագրությունը:



ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ՝ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

շարք պետական ծրագրեր, որոնք ուղղված են ձեռներեցների օգնությանը գործարարության զարգացման ուղղությամբ,- հայտարարեց վարչապետը՝ ընդգծելով, որ առավել ժողովրդականություն է վայելում «Արտադրի'ր Վրաստանում» նախագիծը, որի շնորհիվ միայն 2017 թվականին ստեղծվել են շուրջ 13 հազար նոր աշխատատեղեր, ֆինանսավորվել՝ 323 բիզնես-ծրագիր:

- Մենք սկսում ենք «Երիտասարդ ձեռներեց» նախագիծը, որը կարեւոր ուղղություն է փոքր արտադրությունների զարգացման համար,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ նոր ծրագիրը նախատեսված է 18 - 40 տարեկան ձեռներեցների համար եւ ներառում է գործարարություն սկսելու կամ դրա զարգացման արժեքի 49 տոկոսի հասնող դրամաշնորհի հատկացում:

Բացի այդ, երիտասարդ ձեռներեցներին օգնություն կցուցաբերվի նաեւ խորհրդատվությունների ու կառավարության տարբեր ծրագրերում նրանց ներգրավման ուղղությամբ:

# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ «ՔԱՅԼ՝ ԴԵՊԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՊԱԳԱ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ



***Ապրիլի 13-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին գործադիր իշխանության ներկայացուցիչներին ներկայացրեց երկրի վարչապետի «Քայլ՝ դեպի լավագույն ապագա» նախաձեռնությունը:***

Մինչ այդ, նա հանդիպում ունեցավ փորձագետների հետ եւ նրանց մանրամասն ծանոթացրեց հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված նախաձեռնությանը:

- Շատ բան է արվելու այդ նախաձեռնության իրականացման ծրագրավորման եւ համաձայնեցման համար: Սույն նախաձեռնության նորարությունը նաեւ այն է, որ դրա մշակմանը մասնակցել են տարբեր գերատեսչություններ: Աշխատանքներն առնչվում էին նաեւ ենթակառուցվածքային բաժնին,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

Նշենք, որ «Քայլ՝ դեպի լավագույն ապագա» նախաձեռնությունը բռնազավթված գոտու բնակչությանն առաջարկում է սոցիալական, տնտեսական եւ կրթական տարբեր արտոնություններ: Նախաձեռնության գլխավոր նպատակը վրացիների, աբխազների եւ օսերի միջեւ վստահության վերականգնումն ու հաշտեցման գործընթացի ակտիվացումն է:

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

## ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓԱԹԵԹ ՎՐԱՍՏԱՆԻՆ



Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին իր երախտագիտությունն է հայտնել Եվրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկին եւ Եվրամիության անդամ երկրներին Վրաստանի զարգացման եւ ժողովրդավարական բարեփոխումներին ցուցաբերած աջակցության համար:

- Ցանկանում եմ երախտագիտություն հայտնել նախագահ Տուսկին եւ Եվրամիության անդամ երկրներին երկրի զարգացման, վարած կուրսին եւ ժողովրդավարական բարեփոխումներին ցուցաբերած աջակցության համար, որը հստակորեն արտահայտվել է նրանց կողմից հատկացված ֆինանսական ռեսուրսի՝ 45 միլիոն եվրոյի հատկացման գործում: Վրաստանն անշեղորեն կշարունակի եվրոպական ինտեգրման ուղու վրա իրականացվող բարեփոխումները, եւ այդ գործընթացում, իրոք, անգնահատելի է մեր արեւմտյան գործընկերների նման հստակ աջակցությունը,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նշենք, որ ԵՄ-ն որոշում է ընդունել Վրաստանին մակրոֆինանսական օգնություն տրամադրել տնտեսական կայունությունը պահպանելու համար:

Խորհուրդը որոշում է ընդունել նաեւ Վրաստանին մինչեւ 45 մլն եվրոյի չափով մակրոֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

Սա Վրաստանի համար երրորդ նման գործողությունն է 2008 թվականից հետո: Եվրահանձնաժողովը Վրաստանին մակրոֆինանսական օգնության այս ծրագիրն առաջարկել է տրամադրել անցյալ տարվա սեպտեմբերի վերջին: Միջոցները նախատեսված էին երկրի արտաքին ֆինանսական կարիքների մի մասը բավարարելու համար:

ԵՐԿԻՐԸ ՍԳՈՒՄ Է

# ԴՐՈՇՆԵՐԸ ԽՈՆԱՐՀՎԵՑԻՆ՝ Ի ՆՇԱՆ ՏՂԻԲՈՒԼԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ



***Ապրիլի 6-ին, Տղիբուլիի Մինդելու անվան հանքախորշում, տեղի է ունեցել պայթյուն, որի արդյունքում զոհվել է 6 եւ վիրավորվել՝ 3 հանքագործ:***

Տեղի ունեցած ողբերգության պատճառով, Վրաստանի կառավարության որոշմամբ, ապրիլի 6-ը հայտարարվել էր սգո օր:

Տղիբուլիի հանքախորշերը շահագործող «Վրացածուխ» ընկերության որոշմամբ, զոհված հանքագործների ընտանիքներին փոխհատուցման կարգով տրվում է 30 հազարական լարի:

Ինչպես նշեցին ընկերությունում, ապահովագրական գումարի հետ միասին, տուժվածների ընտանիքները կստանան շուրջ 50 հազարական լարի:

Տղիլբուլիում տեղի ունեցած ողբերգական իրադարձության կապակցությամբ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլուն եւ Վրաստանի բարեկամ ժողովրդին ցավակցական հեռագրեր են հղել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, վարչապետ Կարեն Կարապետյանը:

Հայաստանի վարչապետի ցավակցական հեռագրում, մասնավորապես, ասված է. «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ անձամբ իմ անունից խորապես ցավակցում եմ Ձեզ եւ Վրաստանի բարեկամ ժողովրդին հանքահորի փլուզման հետեւանքով Տղիբուլիում տեղի ունեցած ողբերգության կապակցությամբ:

Այս դժվարին պահին մեր խորին ցավակցությունը, զորակցությունը եւ կարեկցանքի խոսքերն ենք հղում Ձեզ, զոհվածների ընտանիքներին, հարազատներին ու Վրաստանի բարեկամ ժողովրդին»:

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

# ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔԸ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

***Ապրիլի 9-ին, Վիրահայության անունից ծաղկեպսակ դրվեց 29 տարի առաջ Թբիլիսիում տեղի ունեցած ողբերգության զոհերի հիշատակին Վրաստանի խորհրդարանի դիմաց, Ռուսթավելի պողոտայի վրա կանգնեցված հուշակոթողին:***



Վրաստանի անկախության համար զոհված խաղաղ ցույցի 21 մասնակիցների հոգու խաղաղության համար, Վիրահայոց թեմի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հայրեր Տեր Վիրապ քահանա Ղազարյանի եւ Տեր Մանուկ քահանա Ջեյնալյանի գլխավորությամբ, կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Ապա թբիլիսահայերը ծաղիկներ խոնարհեցին Սուրբ Էջմիածին եկեղեցու հարակից տարածքում, Երեւանյան պուրակում կանգնեցված զոհերի խաչքարին:



ԱԴՐԲԵՋԱՆ

## ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԸ ՉՈՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀ

*Ադրբեջանի նախագահական ընտրություններում, ինչպես եւ կանխատեսվում էր, ձայների մեծամասնությամբ հաղթանակ է տարել գործող նախագահ, «Ենի Ազերբայջան» կուսակցության թեկնածու Իլհամ Ալիեւը: Նա հավաքել է ձայների 86 տոկոսը:*

*Նրան հաջորդող թեկնածուն՝ ինքնաառաջադրված Զահիդ Օրուջը, հավաքել է ընդամենը 3,11 տոկոս ձայն:*

*Համաձայն ԿԸՀ տվյալների, ընտրություններին մասնակցել է ընտրելու իրավունք ունեցողների 74,51 տոկոսը:*

*Այս ընտրություններն առաջինն էին Ադրբեջանում սահմանադրական վերջին փոփոխություններից հետո, որոնք Ալիեւին թույլ տվեցին արդեն չորրորդ անգամ առաջադրվել: Նա պաշտոնավարելու է 4-րդ անգամ, բայց՝ յոթ տարի ժամկետով, նախկին 5-ի փոխարեն: Բացի այդ, սահմանադրական փոփոխություններով վերացվել է թեկնածուի առաջադրման քանակի սահմանափակում, հետեւաբար, Ալիեւը կարող է յոթ տարին մեկ առաջադրվել այնքան, որքան կցանկանա:*

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ ԲՈՐՍԱՅՈՒՄ

*Միացյալ Նահանգների կողմից ընդունած հերթական պատժամիջոցների արդյունքում, Ռուսաստանի ֆինանսական բորսայում ճգնաժամ է գրանցվել: Մասնավորապես, նշանակալի անկում է գրանցվել ռուսական առաջատար ընկերությունների բաժնետոմսերի արժեքներում, որի արդյունքում, կորուստը գերազանցել է 17 միլիարդ դոլարը: Հիմնախնդիրներ են ծագել նաեւ միջազգային տարադրամի հանդեպ ռուսական ռուբլու կուրսի հարցում, այստեղ եւս վավերացվել է նշանակալի անկում: Դոլարի համեմատ, ռուսական ռուբլու արժեքը նվազել է մինչեւ 64, իսկ եվրոյի համեմատությամբ՝ մինչեւ 79 ռուբլի:*

ԵՄ

## ԸՆԴԼԱՅՆՎԵՑ ԿԺԴՀ-Ի ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

*Եվրամիությունն ապրիլի 6-ին ընդլայնել է ԿԺԴՀ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցների ցուցակը՝ դրանում ավելացնելով 1 ֆիզիկական եւ 21 իրավաբանական անձ:*

*Այսպիսով, ԵՄ-ը միացավ այն նոր միջոցներին, որոնք ԿԺԴՀ-ի նկատմամբ ձեռնարկվել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից: Պատժամիջոցները սահմանվել են ի պատասխան միջուկային զենքի եւ բալիստիկ հրթիռների ստեղծման հետ կապված նրա գործունեության, ինչը խախտում է ՄԱԿ-ի ԱԽ բազմաթիվ բանաձեւեր:*

ԱՄՆ

## ԳՐԱՆՑՎԵԼ Է ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՆՈՐ ԲԱՑԱՐՁԱԿ ՌԵԿՈՐԴ

*ԱՄՆ պետական պարտքը հասել է նոր ռեկորդային ցուցանիշի՝ գերազանցելով 21 տրլն դոլարը:*

*Ներպետական պարտքի բաժինը կազմում է 5,6 տրլն դոլար: Մնացած մասը՝ 15,3 տրլն դոլարը, բաժին է ընկնում մասնավոր ներդրողներին՝ ֆիզիկական ու իրավաբանական անձանց:*

*Նախագահ Դոնալդ Թրամփի նախընտրական խոստումներից մեկը ԱՄՆ պետական պարտքի վերացումն էր: Նախագահը պնդում էր, որ իր տնտեսական միջոցառումները թույլ կտան լուծել այդ խնդիրը, սակայն, Թրամփի նախագահության մեկ տարվա ընթացքում պետական պարտքն աճել է ավելի քան 1 տրիլիոն դոլարով:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ»

*Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, «Վրացական երազանքը» նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների միջեւ ընկած ժամանակահատվածում ծրագրում է անցկացնել կուսակցական բարեփոխման երկրորդ փուլ:*



- Երկիրը զարգանում է բոլոր ուղղություններով: Մեր գլխավոր ձեռքբերումը ժողովրդավարությունն է, ազատությունն ու մարդու իրավունքները: Դա 2012 թվականի ամենակարեւոր ձեռքբերումն էր, եւ մեր խնդիրն է առավել ամրապնդել ժողովրդավարությունը, առավել լավ պաշտպանել մարդու իրավունքներըն ու հասարակայնությանը ընձեռել ավելի շատ ազատություններ,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն` հավելելով, որ առաջիկայում անելիքները շատ են:

- Մեզանում շատ են այն ընտանիքները, որոնք աղքատության շեմին են եւ ռեսուրսների սղության պատճառով հնարավոր չէ ստեղծել նորմալ կենսապայմաններ: Խախտված է երկրի տարածքային ամբողջականությունը եւ մեր արտաքին քաղաքական խնդիրները դեռեւս կարգավորված չեն, սակայն, համոզված եմ, որ մենք համատեղ աշխատանքով կկարողանանք հասնել մեր նպատակներին,- ընդգծեց խորհրդարանի նախագահը:

Խոսելով առաջիկա անելիքների մասին, Իրակլի Կոբախիձեն նշեց, որ, առաջիկա խորհրդարանական ընտրություններում, «Վրացական երազանքը» կհասնի հաջողության:

- Մենք նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների միջեւ ունենք երկամյա ժամկետ, որպեսզի խորհենք կուսակցության զարգացման մասին, եւ այդ ընթացքում ծրագրում ենք անցկացնել կուսակցական բարեփոխման երկրորդ ալիքը, որը եւս «Վրացական երազանքը» վերջնականապես կձեւավորի` որպես եվրոպական տիպի կուսակցություն,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԸ ՉՊԵՏՔ Է ԱՐԳԵԼԱԿԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ»



*Ապրիլի 12-ին, բիզնեսի եւ տեխնոլոգիայի գործակալությունում կայացած հանդիպմանը, Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ բանկային համակարգը ոչ թե արգելելու է էկոնոմիկայի զարգացումը, այլ դառնալու է դրա շարժիչ ուժը:*

Ինչպես նշեց ֆինանսների նախարարը, ներկայումս երկրի բյուջեի 50 տոկոսը ձեւավորում է 300 ընկերություն, ինչը վատ միտում է:

- Դա նշանակում է, որ մեր էկոնոմիկայում կան հատվածներ, որտեղ շատ բարձր է մենիշխանության ռիսկը, եւ դա մեր էկոնոմիկային առավել թույլ կայունություն է հաղորդում,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ անհրաժեշտ է անել ամեն ինչ, որպեսզի կարճ ժամանակահատվածում վերացվեն վրացական էկոնոմիկայի համար նման արգելքները:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ԱՊՕՐԻՆԻ ԱՆՏԱՌԱՀԱՏՄԱՆ 758 ՓԱՍՏ

***Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարության բնապահպանության վերահսկողության դեպարտամենտի եւ Վրաստանի անտառային տնտեսության գործակալության աշխատակիցների կողմից բացահայտվել է ապօրինի անտառահատման 758 փաստ, ընդ որում` դրանցից 31-ը կրում են քրեական բնույթ:***

Բոլորից շատ ապօրինի անտառահատման փաստեր են բացահայտվել Կախեթիի տարածաշրջանում` 202: Աջարիայում վավերացվել է ապօրինի անտառահատման 34, Իմերեթիում` 66, Գուրիայում` 13, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում` 24, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում` 45, Մցխեթա-Մթիանեթիում` 46, Շիդա Քարթլիում` 18, Քվեմո Քարթլիում` 115, Սամցխե-Ջավախեթիում` 95 փաստ: Ընդհանուր առմամբ, առգրավվել է 2572 խորանարդ մետր ապօրինի անտառանյութ:



## ԱՊՐԻԼԻ 14-Ը` ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐ



*Այսօր` ապրիլի 14-ին, Վրաստանը նշում է Վրաց լեզվի օրը:*

*1978 թվականի ապրիլի 14-ին Վրաստանի բնակչությունը հակադրվեց Վրաստանում որպես պետական լեզվի` վրացերենի կարգավիճակի վերացման մասին Խորհրդային Միության որոշմանը:*

*Ապրիլի 14-ը հայտարարվեց վրաց լեզվի օր եւ օրվա առթիվ Քուռ գետի աջափնյակում տեղադրված Վրաց լեզվի հուշարձանի մոտ անցկացվում են ավանդական միջոցառումներ:*

## ՇԱԼՎԱ ԹԱԴՈՒՄԱՁԵՆ` ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին կառավարության վարչակազմի ղեկավար է նշանակել իրավաբան Շալվա Թադումաձեին:*

*Կառավարության վարչակազմի ղեկավարի պաշտոնը թափուր էր մնացել այն բանից հետո, երբ մարտի 30-ին Մայա Ցքիտիշվիլին դարձավ Վրաստանի ենթակառուցվածքի եւ տարածաշրջանային զարգացման նախարար: Մինչեւ վարչակազմի ղեկավարի պաշտոնում նշանակվելը Թադումաձեն 2012 թվականից աշխատել է կառավարության խորհրդարանական քարտուղար:*

ՇԵՄՈՍԱՎԼԵԲԻՍ ՍԱՄՍԱԽՈՒՐԻ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԳՐԱՎՎԵԼ ԵՆ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ, ԿԱՆԽՎԵԼ Է ՄԱՔՍԱՆԵՆԳԱՅԻՆ ՍԻԳԱՐԵՏԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓՈՐՁԸ

Մարտի 29-ից ապրիլի 9-ը ներառյալ, «Սադախլո ավտոճանապարհային» եւ «Կարծախ» մաքսային անցումակետերում, կանխվել են երկրի տարածք ապօրինաբար թմրանյութեր եւ հոգեբուժական դեղորայքի ներկրման փորձեր: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, Հայաստանի եւ Թուրքիայի քաղաքացիների ավտոմեքենաների եւ ուղեբեռի խուզարկության արդյունքում, հայտնաբերել են հոգեբուժական դեղորայք` 9 հաբ եւ թմրանյութ` 15,11 գրամ:

Գործի նյութերը հետագա արձագանքման նպատակով, փոխանցվել են ՆԳ նախարարության համապատասխան ծառայությանը:

Ապրիլի 9-10-ը «Կարմիր կամուրջ» եւ «Սարփի» մաքսային անցումակետերում կանխվել է երկրի տարածք ապօրինաբար չհայտագրված սիգարետ ներկրելու փորձը: Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, Վրաստանի քաղաքացիներ Փ.Ք.-ի եւ Ա.Ա.-ի անձնական խուզարկության ժամանակ հայտնաբերել են 5 հազար գլանակ չհայտագրված սիգարետ:

Վրաստանի հարկային օրենսգրքի 289 հոդվածի 14-րդ մասի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացիների մաքսանենգային ապրանքը առգրավվել է, եւ նրանցից յուրաքանչյուրը տուգանվել է 1000-ական լարիով:

## «ՄԵՆՔ ՄՈՒԾՈՒՄ ԵՆՔ ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՀԻՄՆՈՒՄ ԱՆՎՏԱՆԳ ԱՊԱԳԱ»



***Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության նախաձեռնությամբ, ապագա հարկատուների համար մեկնարկել է տեղեկատվական ծրագիր` «Մենք մուծում ենք հարկերը եւ հիմնում անվտանգ ապագա» անվանմամբ:***

Ծրագրի նպատակն է` աջակցել ապագա հարկատուների հարկային կուլտուրայի եւ իմացության մակարդակի բարձրացմանը: Վերոնշյալ ծրագիրը նախատեսված է ուսանողների համար, եւ դրանում երկրի մասշտաբով ներգրավվել են 30-ից ավելի բուհերի ուսանողներ: Ապագա հարկատուները եկամուտների ծառայության մաքսային անցումակետերում ձեւավորված տնտեսական գոտիներում, սերվիս-կենտրոններում կանցնեն մեկօրյա սեմինարներ, նրանց կտրվի հարկային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ եւ նշանակալի տեղեկատվություն:

Ապրիլի 12-ին Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ուսանողները եղան եկամուտների ծառայության «Կարմիր կամուրջ» մաքսային անցումակետում, «Թբիլիսի» տնտեսական գոտում եւ Գլդանի-Նաձալադեւիի սերվիս-կենտրոնում:




Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունն ապագա հարկատուների տեղեկատվական բնույթի ծրագրերը իրականացնում է ամեն տարի: 2017 թվականին այդ ծրագրում ներառվել էր 21 բուհերի ավելի քան 900 ուսանող:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

